«ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՃԱԿԱՏ» ԹԵՐԹԸ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՄԱՍԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1944-ին հրապարակվիլ սկսած այս ամսագիրը կուգա լեցնելու մեծ պակաս մը, որ գոյացած էր էջմիածնի նախկին ամսագրին՝ «Արարատ»-ի դադարումով 1917-ին, համաշխարհային առաջին պատերազմի միջոցին։

«Էջմիածին», որուն 1947 տարվա Մայիս-Հունիս միացյալ թիվը ունիմ նկատի, այս տողերու գրության առթիվ, կբացվի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ի նկարով, որուն կհաջորդե անմիջապես հայրենադարձ Արսեն Տեր-Սարգսյանի «Էջմիածին» խորագրված մեկ քերթվածը, որուն մեջ շատ լավ պատկերացված է Հայության դարավոր Մայր Աթոռը, իբր «ռահվիրա, երկնից կախած կանթեղ, լուսո ջահ» և այլն։

Շահեկան ու արժեքավոր այլ գրվածքներու կարդին, ամսագրին մեջ էջեր գրաված են Ստեփան Մալխասյանցի «Գրիգոր Նարեկացի»-ն և պրոֆեսոր Ա. Աբրահամյանի «Մադրասի հայ գաղութի դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարում» հոդվածները, որոնք ունին բանասիրական արժեք։

Մալխասյանց մեծ վարպետությամբ կը-ներկայացնե Նարեկացիի կյանքը, կրոնաբարոյական մթնոլորտը, լեզուն ու ոճը, խրթինությունները, «բառերի չափազանց կուտակում, կրկնություններ, չափազանցություններ», որոնց մասին գրած են Մալխասյանցեն առաջ Գյուտ Եպիսկոպոս իր «Արևելեան անապատականը և Նարեկը»-ին մեջ և Մանուկ Աբեղյան «Հին հայ գրականության պատմության» մեջ։

Պրոֆեսոր Ա. Աբրահամյան ի վեր կհանի այն մեծ դերը, զոր ունեցած է Մադրասի հայ գաղութը, ուր հրատարակված է 1794-ին առաջին հայ լրագիրը՝ «Ազդարար», որուն մեջ ընդարձակ տեղ է հատկացված հայ ժողովրդի ազատագրական շարժման, գլխավորությամբ Հովսեփ եպիսկոպոս Արղությանի։

ԶԱՎԵՆ ԱՐԵՎՅԱՆ

Պուրեշ

(«Հայաստանեան ճակատ» նոյեմբեր 30, 1947 թ.)